

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԾՈՒՄ**

Համաձայն «Կանոնադրութիւն Ընդհանուր Ժողովոյ Միաբանական Ուխտին Սրբոց Յակոբեանց» (Յօդուած 6, Բ) տարւոյս Յուլիս 6-ին գումարուեցաւ Միաբանական Ընդհանուր Ժողով, մասնակցութեամբ Սուրբ Աթոռ գտնուող Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամներուն, որուն ընթացքին Միաբան Հայրեր, նկատելով եպիսկոպոսներու անմիջական կարիքը Սուրբ Տեղեաց եւ Սուրբ Աթոռէն ներս՝ կատարեցին եպիսկոպոսական թեկնածուներու արժանաւորութեան քուէարկութիւն:

Միաբանական Ընդհանուր Ժողովը Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի եւ Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեանի կողմէ ներկայացուած եպիսկոպոսական չորս թեկնածուներէն գաղտնի քուէարկութեամբ ընտրեց Տ. Թէոդորոս Ծ. Վարդապետ Զաքարեանը եւ Տ. Կորիւն Ծ. Վարդապետ Բաղդասարեանը՝ արտօնելով անոնց եպիսկոպոսական ձեռնադրութիւնն ու օծումը:

Սեպտեմբերի վերջաւորութեան ընտրեալ թեկնածուներ՝ Տ. Թէոդորոս Ծ. Վարդապետ Զաքարեան եւ Տ. Կորիւն Ծ. Վարդապետ Բաղդասարեան մեկնեցան հայրենիք, ապա Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Հոկտեմբեր 7-ին, եպիսկոպոսական ձեռնադրութեան նախօրէին, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Հայ Եկեղեցւոյ հինգ վարդապետներու ուխտադրութեան կարգը՝ ներկայութեամբ Մայր Աթոռի Լուսարարապետի, Վանօրէից տեսչի, Խարտաւիլակ Սրբազանի: Տ. Օշական Վարդապետ Կիւկիւլեան, Տ. Թէոդորոս Ծ. Վարդապետ Զաքարեան, Տ. Կորիւն Ծ. Վարդապետ Բաղդասարեան եւ Տ. Կիրակոս Վարդապետ Դաւթեան ծունկ չոքեցին Միածնաէջ Մայր Տաճարի՝ Իջման Սուրբ Սեղանին առջեւ եւ աղօթեցին, ապա Հայր Սուրբերուն բաժնուեցաւ երգմնագիրը, որ կը կնքեն Սուրբ Էջմիածնի հետ: Սուրբ Սեղանին առջեւ հինգ վարդապետները միասին ծնկաչոք ստանձնեցին եպիսկոպոսական ուխտագիրով հաստատուող իրենց պարտաւորութիւնները, որը ապագայ եպիսկոպոսներու գրաւոր ուխտն է Սուրբ Էջմիածնի հետ, երգմնագիրն ու խոստումը՝ անխոտոր կատարելու Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ պատուիրանները, հաւատարիմ մնալու Քրիստոնէութեան, զանց չառնելու եկեղեցւոյ կարգ ու կանոնը, հաւատարիմ ծառայելու Հայոց Հայրապետին: Ուխտեցին հաւատարիմ մնալ իրենց կոչումին, միաբանութեան ուխտին եւ կանոնադրութեան, կատարել Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրահանգներն ու որոշումները մինչեւ կեանքի վերջ՝ անշեղօրէն ծառայելով եկեղեցւոյ պայծառութեան: Հինգ ընտրեալ վարդապետներէն իւրաքանչիւրի ստորագրութիւնը երգմնագիր թուղթին վրայ հաստատուեցաւ նաեւ խարտաւիլակ Սրբազանի, ներկայ եպիսկոպոսներու եւ Մայր Աթոռի Լուսարարապետի ստորագրութեամբ:

Ուխտադրութեան արարողութենէ ետք Հայր Սուրբերը շտապեցին Վեհարան՝ Նորին Սրբութեանը յանձնելու ուխտագիրները եւ ստանալու Վեհափառ Հայրապետի օրհնութիւնը: Լուսարարապետ Մուշեղ Սրբազան, ներկայացնելով ուխտագիրը ստորագրած Հայր Սուրբերը՝ վստահեցուց Նորին Սրբութեան, թէ իրենց ջանքերով արդէն աչքի ին-

կած ապագայ եպիսկոպոսները յուսախափ չեն ընէր իրենց յետագայ ծառայութեամբ, կը դառնան Հայ Եկեղեցւոյ հոգեւոր նոր իշխաններ՝ առաւել ջերմեռանդութեամբ ծառայելով Մայր Աթոռին եւ հայրենիքին: Վեհափառ Հայրապետը դիմելով ընծայացունէրուն՝ յիշեցուց, որ անոնց ծառայութեամբ պայմանաւորուած են եկեղեցւոյ հեղինակութիւնը, այն յարգանքն ու սէրը, որ կը տածէ Հայ Ժողովուրդը Մայր Եկեղեցւոյ հանդէպ. «Կ'աղօթեմ եւ կը մաղթեմ, որ Տէրը առատ շնորհներ հեղէ ձեր վրայ եւ այդ շնորհները կեանքի եւ գործի վերածուին», - յորդորեց Նորին Սրբութիւնը՝ իւրաքանչիւրին մաղթելով արդիւնաւոր ծառայութիւն:

Հոկտեմբեր 8-ին, վաղ առաւօտեան, կիրակնօրեայ Սուրբ Պատարագէն առաջ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի շրջափակը լեցնող բազմութիւնը կը ծփար ալիք-ալիք: Ժողովուրդին ուշադրութիւնը կը յափշտակուի յանկարծ Վեհարանէն դուրս եկող թափօրի երգեցողութեամբ. «Հրաշափառ Աստուած եւ միշտ բարեխնամող...»: Հայաստանեայց Եկեղեցւոյ բարձրաստիճան եկեղեցականներու պատկառելի թափօրն է որ կ'ուղղուի դէպի Տրդատայ Դուռ, առաջնորդելու համար Ն. Ս. Օ. Տ. Գարեգին Բ. Մայրապոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը դէպի Սուրբ Տրդատ Բաց խորան:

«Զփրկութիւն Հայաստանեայց սկզբնաւորեալ...» բառերը այլապէս սրտագրաւ շեշտով մը կը թրթռան սրտերու մէջ Լուսաւորչի եւ Տրդատի յիշատակին ներկայութեամբ, որ շարականի մը քաղցրութենէն կամ անցեալի անուշ տպաւորութենէն շա՛տ աւելի իրական եւ պիտի ըսէինք՝ շօշափելի ըլլալու աստիճան թանձրական գոյութիւն մըն է հոն, Հայոց երկնքին տակ, Միածնի լուսահիմն Տաճարի ետին եւ Սուրբ Տրդատ Բաց խորանին առջեւ:

Պատկառելի թափօրը երբ կը հասնի Սուրբ Տրդատ Բաց խորանին դիմաց, Ամենայն Հայոց Հայրապետի ամպհովանիի ետին կ'երեւին հինգ եպիսկոպոսացունները, զգեստաւորուած պատարագիչի հանդերձներով. Իրաքի Հայոց թեմի առաջնորդ Տ. Օշական Վարդապետ Կիւկիւլեան, Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Տնօրէն Ժողովի Ատենապետ Տ. Թէոդորոս Մ. Վարդապետ Զաքարեան, ԱՄՆ Արեւելեան թեմի առաջնորդ Տ. Մեսրոպ Վարդապետ Պարսամեան, Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Կալուածոց տեսուչ Տ. Կորիւն Մ. Վարդապետ Բաղդասարեան եւ Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Կիրակոս Վարդապետ Դաւթեան:

Սրբազան արարողութեան առիթով Սուրբ Էջմիածին ժամանած էին Հայ Եկեղեցւոյ թեմակալ առաջնորդներ, Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան ներկայացուցիչներ, Մայր Աթոռի բարերաններ, ուխտաւորներ Հայաստանէն, ԱՄՆ Հայոց Արեւելեան թեմէն, Իրաքի եւ Վիրահայոց թեմերէն:

Մինչ եկեղեցական դասը կը տարածուի եւ կը գրաւէ իր տեղը, Հայոց Հայրապետը կը մտնէ Սուրբ Պատարագի: Քառաձայն երգչախումբը կը սկսի Սուրբ Պատարագի երգեցողութեան, եւ Վեհափառ Հայրապետն իրեն առնթերականեր ունենալով Շիրակի թեմի առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Միքայէլ Արքեպիսկոպոս Աջապահեանը, եւ Արցախի թեմի առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Վրթանէս Եպիսկոպոս Աբրահամեանը, կը բազմի Սուրբ Տրդատ Բաց խորանին առջեւ՝ կատարելու ընծայացուններու հաւատքի ուղղափառութեան քննութիւնը: Վարդապետներու արժանաւորութեան մասին Ամենայն Հայոց Կաթողիկոսին առջեւ վկայելու եկած էին Հայ Եկեղեցւոյ ներկայացուցիչներ Երուսաղէմէն, Ամերիկայէն, Իրաքէն եւ Վրաստանէն դպիրներ, կիսասարկաւագներ, սարկաւագներ, քահանաներ, եպիսկոպոսներ եւ հաւատաւոր ժողովուրդը ներկայացնող

աշխարհականներ:

Ընծայեալները ծնրադիր, խարտաւիլակ՝ Աւստրալիոյ եւ Նոր Զելանդիոյ Հայոց թեմի առաջնորդ, Հնդկաստանի եւ Ծայրագոյն Արեւելքի Հայրապետական պատուիրակ՝ Գերաշնորհ Տ. Հայկազուն Արքեպիսկոպոս Նաճարեանի առաջնորդութեամբ կը յառաջանան դէպի Վեհափառ Հայրապետի ոտքը: Խորհրդաւոր է պահել, մանաւանդ ընծայեալներու համար, որոնց երեւակայութեան առջեւն վստահաբար կ'անցնէին քրիստոնէական մտածումին սրբութիւնը կերտող մեծ անձնաւորութիւններու դէմքերը, մին միւսէն աւելի լուսափայլ ու շքեղ: «Յաւիտեանական յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի», կ'երգեն դպիրները սրտայոյզ ու քաղցրաձայն, իբրեւ երախտագիտութեան տուրք եւ վկայութիւն անոնց, որոնք գերագոյն վկաները եղան եւ կը շարունակեն մնալ ինչպէս քրիստոնէական տիեզերական հաւատքին, այնպէս ալ մեր Եկեղեցւոյ:

Այս կերպ վերջացաւ Ընծայման կարգը: Յետոյ նորէն կազմուեցաւ թափօր՝ առաջնորդելու ձեռնադրուղները դէպի Սուրբ Սեղան, ուր Նորին Սուրբ Օծութիւնը բազմած էր Սեղանին Աջակողմը դրուած աթոռին վրայ, շրջապատուած առընթերակայ եպիսկոպոսներէն եւ սարկաւազներէն: Իրեն կ'ուղղուին ընծայողներն ու ընծայեալները: Հակիրճ, բայց տպաւորող արարողութենէ մը յետոյ, հինգ ընծայեալները բեմին վրայէն կը դառնան դէպի ժողովուրդը, ծնրադիր եւ ձեռամբարձ՝ հերթական անգամ հրաժարելու աշխարհէն: Արարողութեան ամենէն խորհրդաւոր պահն է: Եկեղեցականաց դասը երիցս կ'երգէ «Աստուածային եւ երկնաւոր շնորհ ... կոչէ ... ի քահանայութենէ յեպիսկոպոսութիւն սրբոյ Եկեղեցւոյ ի սպասաւորութիւն», եւ դարաց դասը վարէն՝ յանուն ժողովուրդին, երիցս ձայնակցելով կը պատասխանէ «Արժանի են»: Յետոյ կը շարունակուի Սուրբ Պատարագը, կը կարդացուի Ճաշու գիրք եւ աւետարան, ապա «Ողջոյն»-էն առաջ կը վերսկսի ձեռնադրութեան արարողութեան խորհուրդը: Ընծայեալները ծնրադիր կը բոլորուին դարձեալ ձեռնադրող Հայրապետին առջեւ, որ յուզումէն դողդոջուն ձայնով կը կարդայ շնորհաբաշխութեան մեծ աղօթքը, որով Ս. Հոգւոյն կենսագործող շնորհը կը հայցուի նոր ընծայից վրայ. «Ես դնեմ զձեռս ի վերայ սորա եւ դուք ամենեքեան աղօթս արարէք զի արժանաւոր լիցի սա զաստիճան եպիսկոպոսութեան անարատ պահել առաջի Աստուծոյ»: Ապա ձեռնադրուողները զգեստաւորուած եպիսկոպոսական հանդերձանքով, կը շարուին նորէն սեղանին առջեւ: Ժամն է օծումին, իբր նշանակ Ս. Հոգւով դրոշմուելուն: Դպիրները կ'երգեն «Կենդանարար Աստուած» շարականը եւ Մայր Աթոռի Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Մուշեղ Եպիսկոպոս Պապայեան հանդիսաւոր թափօրով Սուրբ Խորան կը բերէ Սրբալոյս Միւռոնը, որով Նորին Սրբութիւն Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, եպիսկոպոսութեան կոչելով Օշական, Թէոդորոս, Մեսրոպ, Կորիւն եւ Կիրակոս Վարդապետները, կ'օծէ անոնց ճակատներն ու աջ ձեռքի բթամատները: Արարողութեան վերջաւորութեան Վեհափառ Հայրապետը տուչութեան ուրոյն օրհնութիւններով նորաօծ եպիսկոպոսներուն յանձնեց անոնց եպիսկոպոսական իշխանութեան խորհրդանիշերը՝ եպիսկոպոսական գաւազան, մատանի եւ աւետարան, մինչ դպիրները կ'երգէին «Որ ի վերայ բխեալ գաւազանի» շարականը, ապա յիշարժան այս օրուան առիթով իր հայրապետական պատգամը տուաւ հաւատաւոր ժողովուրդին եւ նորաօծ եպիսկոպոսներուն ընդգծելով՝ «Այսօր վերստին աղօթքը մեր շուրթերուն Ատրպէյճանի ռազմական ոճրագործութիւններու եւ Արցախի հայաթափումի պատճառով լրջագոյն մարտահրաւէրներ դիմագրաւող մեր հայրենիքի եւ ժողովուրդի համար՝ Ամենակալ Տիրոջ բարեխնամ կամօք ու ողորմութեամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ կատարեցինք եպիսկոպոսական ձեռնադրութիւն եւ օծում:

... Բողոքիս հայցով ու աղօթքով եպիսկոպոսացեալ մեր եկեղեցականները երկնառաք շնորհներ ստացան՝ ըլլալու հոգեւոր տեսուչը հաւատացեալներու, մեր Սուրբ Եկեղեցւոյ ուղղափառ վարդապետութեան եւ սրբազան աւանդութեան պահպանողն ու փոխանցողը, նախանձախնդիր՝ մեր ժողովուրդի աստուածասիրութեան ու հաւատքի զօրացման: Իր ծառայութեան մէջ եպիսկոպոսը կոչուած է նմանելու Քրիստոսին եւ իր վրայ առնելու Տիրոջ քաղցր լուծը, իր հաւատաւոր կեանքով ու գործերով օրինակ ըլլալու հաւատացեալներուն: «Նմանեցէ՛ք ինծի ինչպէս որ ես՝ Քրիստոսի» (Ա Կորնթ. ԺԱ:1),- կը պատուիրէ Սուրբ Պօղոս Առաքեալ: Տիրոջը նմանելու կոչումն ու ձգտումը Եկեղեցւոյ սպասաւորներու համար ակունք են զօրութեան՝ մշտարթուն քաջ հովիւ ըլլալու, հաւատացեալներուն Քրիստոսով փրկութեան առաջնորդելու: Այսպիսի յանձնառութեամբ սպասաւորութեան կը յորդորէ առաքեալը՝ ըսելով. «Արածեցէ՛ք Աստուծոյ այդ հօտը՝ որ յանձնուած է ձեզի» (Ա Պետ. Ե:2)»:

Ամենայն Հայոց Հայրապետը շեշտեց, որ այս գիտակցութեամբ զօրացեալ, պատմութեան ընթացքին, եպիսկոպոսներու քաջեռանդ առաջնորդութեամբ հայրենիքի եւ սփիւռքի տարբեր համայնքներու մէջ զօրացած է Հայոց հոգեւոր կեանքը, զարգացած է մշակոյթն ու դպրութիւնը, անխաթար պահպանուած է ազգային ինքնութիւնը: Նորին Սրբութիւնը հաստատեց, որ այսօր ալ Հայոց Եկեղեցւոյ եպիսկոպոսաց դասը, իրեն յանձնուած հօտին հանդէպ պատասխանատուութեամբ, անհոգնաբեկ ջանքեր կը գործադրէ, որպէսզի Հայ ժողովուրդը հաւատարիմ մնայ մեր հայրերու սուրբ հաւատքին եւ իր կեանքը խարսխէ քրիստոնէական արժէքներու վրայ:

«Ներկայիս, երբ Արցախի հայաթափումի հետեւանքով մեր ազգը կը գտնուի լուրջ հիմնախնդիրներու հանդիման, մեր Եկեղեցին, մեր Սրբազան Հայրերը, հոգեւոր սպասաւորները կանգնած են լուրջ պատասխանատուութեան առջեւ՝ նախանձախնդրութեամբ իրենց կարեւոր նպաստը բերելու Արցախէն բռնի տեղահանումներուն մարդասիրական օգնութիւն ցուցաբերելու աշխատանքներուն, միախառնելու ցաւի ու նեղութեանց մէջ գտնուող մեր քոյրերուն եւ եղբայրներուն», - ըսաւ Հայոց Հայրապետը՝ ներկայացնելով եպիսկոպոսութեան արժանացած եկեղեցականներուն եւ անդրադառնալով նորած Սրբազաններու տարիներու եկեղեցանուէր ու ազգասէր ծառայութեան: Ապա դիմելով նորած եպիսկոպոսներուն՝ Հայոց Հովուապետը մաղթեց, որպէսզի ամրանան Սուրբ Հոգիի առատաբուխ շնորհներով, երանելի Սուրբ Հայրերու նմանողութեամբ պատրաստ ըլլան առնելու իրենց խաչը եւ հետեւելու մեր Տիրոջը:

«Մեր յորդորն ու պատգամն է, որ հաստատուն պահէք ձեր ուխտը, ծառայէք եւ գործէք մեր Տիրոջ եւ Փրկչի Յիսուս Քրիստոսի օրինակով, որպէսզի ձեր սպասաւորութեամբ Քրիստոսի սէրը զօրանայ Հայոց կեանքի մէջ, եւ միասիրտ ու միակամ ըլլայ մեր ժողովուրդը: Մեր նախնեաց նման արթուն պահապանը եղէք հոգեւոր եւ ազգային մեր արժէքներու ու սրբութիւններու, առաջնորդէք մեր ժողովուրդը աստուածապատուէր շաւիղներով, հայրենիքի լուսաւոր ու ապահով գալիքը կերտելու տեսլականով: Հայրենեաց համար այս դժուար շրջանին, երբ մեր ժողովուրդը եւ պետութիւնը ծանր փորձութիւններու մէջէն կ'անցնին, շարունակէք ձեր բարի ջանքերը՝ մեր ժողովուրդի զաւակները քաջալերելու եւ գօտեպնդելու, ազգի կարողութիւններն ու հնարաւորութիւնները նպատակաւորաբար հայրենիքի հիմնախնդիրներու յաղթահարմանը, սփոփելու եւ ըստ ամենայնի սատարելու բռնագաղթեալ արցախցի մեր քոյրերուն եւ եղբայրներուն: Այսպիսի յանձնառութիւններու ու ծառայասիրութեան մէջ պիտի դրսեւորուեն առ Քրիստոս մեր հաւատը եւ հայրենասիրութիւնը», - ընդգծեց Նորին Սրբու-

թիւնը՝ մաղթելով, որ նորաօծ Սրբազաններու ծառայութիւնը զարդարուի բարի իրագործումներով՝ ի փառս Աստուծոյ, ի սէր ազգի եւ մեր Սուրբ Եկեղեցւոյ:

Հայրապետական պատգամէն յետոյ, Սարկաւազը ձայնեց «Ողջոյն տուք միմեանց»ը. Սրբազան Հայրապետը մօտենալով Օշական, Թէոդորոս, Մեսրոպ, Կորիւն եւ Կիրակոս Սրբազաններուն՝ նախ համբուրեց իր ձեռնասուններուն օծեալ աջերը եւ ճակատները, իրեն հետեւեցան բոլոր հոգեւորականները, որոնք իրենց կարգին ժողովուրդին փոխանցեցին ձեռնադրուած եպիսկոպոսներուն ողջոյնին անդրանիկ օրհնէնքը:

Սուրբ Պատարագի վերջաւորութեան նորաօծ եպիսկոպոսները շարուեցան խորանին առջեւ՝ ընդունելու հաւատացեալ ժողովուրդին աջհամբոյրը: Աւելի քան սրտառուչ էր այն կարօտագին վերաբերմունքը որ Սուրբ Տրդատ Բաց խորանին առջեւ հաւաքուած ժողովուրդը ցոյց տուաւ այդ օրը, աջհամբոյրի միջոցին:

Հոկտեմբեր 9-ին, նորաօծ եպիսկոպոսները այցելեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ Վեհարանի մէջ: Սրբազանները Նորին Սրբութեանը յանձնեցին իրենց մատուցած եպիսկոպոսական անդրանիկ պատարագներու նշխարները եւ ստացան Վեհափառ Հօր օրհնութիւնը: Մայր Աթոռի Լուսարարապետ՝ Մուշեղ Եպիսկոպոս Պապայեան Նորին Սրբութեանը զեկուցեց, որ նոյն օրը առաւօտեան, եպիսկոպոսները Սուրբ եւ Անմահ Պատարագներ մատուցած են Սուրբ Էջմիածնի եկեղեցիներու մէջ՝ Օշական Եպիսկոպոս Կիւլկիւլեան Ս. Գայիանէ վանքին մէջ, Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեան Մայր Աթոռի Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ, Մեսրոպ Եպիսկոպոս Պարսամեան Ս. Հռիփսիմէ վանքին մէջ, Կորիւն Եպիսկոպոս Բաղդասարեան Մայր Աթոռի Ս. Յովհաննէս Մկրտիչ եւ Ս. Վարդան մատուռ-մկրտարանին մէջ, Կիւրակոս Եպիսկոպոս Դաւթեան Ս. Շողակաթ վանքին մէջ:

Հայոց Հայրապետը գոհունակութեամբ պատմեց նորաօծ եպիսկոպոսներուն՝ եպիսկոպոսական ձեռնադրութեան առթիւ ստացած բազմաթիւ շնորհաւորանքներու մասին: Վեհափառ Հայրապետը յատկապէս կարեւորեց այն, որ ձեռնդրուողներէն երկուքը Երուսաղէմի Հայոց Պատրիարքութենէն են եւ Տէրունակոխ վայրերու Հայոց Միաբանութեան մէջ այժմ կայ երկու նոր բարձրաստիճան սպասաւոր. «Զօրութեան նշան է, երբ եպիսկոպոսաց դասը կը համալրուի: Եկեղեցին հզօր է ընտրեալ, միաբան եւ համախումբ եպիսկոպոսներով», - ընդգծեց Նորին Սրբութիւնը եւ յորդորեց նորաօծներուն, - «Միշտ ամէն բանէ վեր դասել եկեղեցւոյ պայծառութիւնն ու շէնութիւնը: Այդպիսին է մեր պարտքը գալիքի, ազգի, սերունդներու առջեւ»: Հանդիպման վերջաւորութեան Հայոց Հովուապետը եպիսկոպոսներուն մաղթեց, որ առաւել ջանադիր ծառայեն, որպէսզի զարգանան ու զօրանան այն նուիրապետական կառոյցները, ուր անոնք կը ծառայեն: Վեհափառ Հայրապետը շեշտեց, որ Հայ ժողովուրդի համար այս ծանրագոյն ժամանակներուն, եկեղեցւոյ դերակատարութիւնն առաւել կարեւորուած է, ժողովուրդն ալ բազմաթիւ ակնկալիքներ ունի հազեւորականներէն, մարդոց հայեացքներն ուղղուած են եկեղեցիին: Հետեւաբար՝ աղօթքով մշտապէս Բարձրեալէն իմաստութիւն պիտի խնդրեն, որ անշեղ կատարեն իրենց պարտքը հայրենիքին եւ ժողովուրդին առջեւ:

Վեհափառ Հայրապետին տեսակցելէ յետոյ նորաօծ Սրբազան Եպիսկոպոսները վերադարձան իրենց ծառայութեան վայրեր: